Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտը աչքի է ընկնում հաճախակի կատարվող փոփոխություններով և լրացումներով: Վերջիններս երբեմն հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ: Շատ դեպքերում, այս կամ այն հարցում տարբեր հարկային և իրավասու մարմիններ ունեն տարբեր մեկնաբանություններ:

Հաճախ հարկային մարմինները ներկայացնում են պահանջներ այնպիսի գործարքների կամ հաշվառման մեթոդների նկատմամբ, որոնց նկատմամբ նախկինում դիտողություններ չեն եղել: Դրա հետևանքով կարող են առաջանալ լրացուցիչ տույժեր և տուգանքներ: Հարկային ստուգումները կարող են ընդգրկել հաշվետու տարվան անմիջապես նախորդող 3 տարի ժամանակաշրջան, սակայն որոշ պայմաններում ստուգումները կարող են ընդգրկել ավելի վաղ ժամանակաշրջաններ:

Դեկլարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ընկերությանը հատուցումների գծով ներկայացված դատական հայցերի հետ կապված ձևավորված պահուստները ներառված են Ընկերության Ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում:

Ընկերությանը ներկայացվող մնացած դատական հայցերի առումով Ընկերության դեկլարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստավորումներ չեն կատարվել:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – ընկերությունը որպես վարձակալող

Ընկերությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր՝ գրասենյակային տարածք վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2011	2010 (վերաներկայացված)
Մինչև 1 տարի	17,732	6,722
1-5 տարի	8,786	-
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	26,518	6,722

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Այնուամենայնիվ, 2011-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցները ապահովագրված են: Զանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Սկսած 2010թ. Ընկերությունը հանդիսանում է Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ընկերությունների բյուրոյի անդամ (այսուհետ՝ Բյուրո): Բյուրոյի նպատակը տուժած անձանց շահերի պաշտպանությունն է և ԱՊՊԱ համակարգի կայունության և զարգացման ապահովումը: Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունները կատարում են միանվագ, պարբերական և լրացուցիչ վճարներ: Բյուրոն՝ երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է տուժած անձանց պատճառված վնասները, եթե՝

1. վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձը անհայտ է (այս դեպքում հատուցվում է միայն տուժած անձանց պատճառված վնասը),
2. պատճառվել է վնաս ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր,
3. վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ,
4. վնաս պատճառված ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ, եթե նա պարտավոր էր հատուցել պատճառված վնասը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում:

32 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում «ԻՆՊՈՍՏՐԱԽ» ԱԲԲԸ, որը տիրապետում է Ընկերության 75% բաժնետեր «Ինվեստ-Պոլիս» ՓԲԸ ձայնի իրավունք սովոր բաժնետոմսերի 100%-ը:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մանրամասները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2011			2010 (վերաներկայացված)		
	Բաժնետերեր	Կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ	Բաժնետերեր	Կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ
Պահանջներ ապահովադիրների նկատմամբ						
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	-	-	261	-	-	75
Տարվա ընթացքում ավելացում	-	-	1,152	-	-	869
Տարվա ընթացքում նվազում	-	-	(985)	-	-	(683)
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	428	-	-	261
Պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ						
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	-	34,380	-	-	51,429	-
Տարվա ընթացքում ավելացում	-	322,814	-	-	193,121	-
Տարվա ընթացքում նվազում	-	(317,986)	-	-	(210,170)	-
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	39,208	-	-	34,380	-
Այլ անձանց տրամադրած փոխառություններ						
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	45,000	-	-	-	-	-
Տարվա ընթացքում ավելացում	59,500	-	-	45,000	-	-
Տարվա ընթացքում նվազում	(104,500)	-	-	-	-	-
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	45,000	-	-
Ապահովադիրներին վճարվելիք գումարներ						
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-	-	-
Տարվա ընթացքում ավելացում	-	-	588	-	-	210
Տարվա ընթացքում նվազում	-	-	(588)	-	-	(210)
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-	-	-
Եկամուտներ և ծախսեր						
Համախառն ապահովագրավճարներ	-	-	1,152	-	-	869
Համախառն հատուցումներ	-	-	588	-	-	210
Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ	-	-	312,903	-	-	181,504
Այլ գումարներ						
Սառեցված ավանդ	50,000	-	-	50,000	-	-

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2011	2010 (վերաներկայացված)
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	108,300	69,943
Հատկացումներ կենսաթոշակային հիմնադրամին	7,030	1,772
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	115,330	71,715

33 Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները, որոնք հաշվեկշռում արտացոլված չեն իրենց իրական արժեքով, ներկայացված են ստորև համապատասխան մնացորդային արժեքներով՝

	2011		2010 (վերաներկայացված)	
	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք	Հաշվեկշռային արժեք	Իրական արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	314,615	314,615	235,680	235,680
Այլ անձանց տրամադրած փոխառություններ	92,430	92,430	45,026	41,547
Վերաապահովագրական ակտիվներ	188,441	188,441	192,232	192,232
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,005,112	2,005,112	1,493,469	1,493,469
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	149,922	149,922	519,392	519,392
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Ապահովագրական պարտավորություններ	456,755	456,755	295,291	295,291
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	162,466	162,466	149,207	149,207

Ակտիվներ, որոնք իրական արժեքը մոտավորապես հավասար է հաշվեկշռային արժեքին

Կարճաժամկետ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար (մինչև երեք ամիս) ենթադրվում է, որ, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը: Այս ենթադրությունը կիրառելի է մաս որոշակի մարման ժամկետ չունեցող ցպահանջ ավանդների, բանկային հաշիվների համար:

Ֆիքսված տոկոսադրույքով ֆինանսական գործիքներ

Ֆիքսված տոկոսադրույքներով և ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների իրական արժեքը որոշվում է նրանց ճանաչման պահին գործող շուկայական տոկոսադրույքները համեմատելով մնանատիպ ֆինանսական գործիքների ընթացիկ շուկայական տոկոսադրույքների հետ: Ֆիքսված տոկոսադրույքներով ավանդների գնահատված իրական արժեքը հիմնված դրամական հոսքերի վրա՝ գեղչված համանման պարտքային ռիսկ և ժամկետ ունեցող գործիքների տոկոսադրույքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ այդ գործիքների իրական արժեքը չէր տարբերվում հաշվեկշռային արժեքից:

33.1 Իրական արժեքի հիերարխիա

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն ներկայացված իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների մշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 – համանման ակտիվների և պարտավորությունների գծով գործող շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են թե՛ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Հազար ՀՀ դրամ

	2011			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Չգնանշվող պարտատոմսեր	-	3,601,752	-	3,601,752
ԸՆԴԱՄԵՆՆՐ	-	3,601,752	-	3,601,752

Հազար ՀՀ դրամ

	2010 (վերաներկայացված)			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Ցուցակված արժեթղթեր և պարտատոմսեր	40,319	-	-	40,319
Չգնանշվող պարտատոմսեր	-	1,022,679	-	1,022,679
ԸՆԴԱՄԵՆՆՐ	40,319	1,022,679	-	1,062,998

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում 1-ին և 2-րդ մակարդակների միջև նշանակալի փոխանցումներ չեն կատարվել: Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

34 Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ըստ սպասվելիք մարման ժամկետների: Ընկերության չգեղջված պայմանագրային պարտավորությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 35.4-ում: Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունների և վերապահովագրական ակտիվների համար, ժամկետայնությունը որոշվում է՝ ելնելով ճանաչված ապահովագրության գծով պարտավորություններից գնահատված դրամական արտահոսքի ժամկետներից: Չվաստակած ապահովագրավճարները և չվաստակած ապահովագրավճարներում վերապահովագրողների մասը բացառվել է վերլուծությունից, քանի որ վերջիններս չեն համարվում պայմանագրային պարտավորություններ:

Հազար ՀՀ դրամ

	2011							Ընդամենը
	Մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթա- հանրա- գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա- հանրա- գումար	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	127,813	100,185	86,617	314,615	-	-	-	314,615
Այլ անձանց տրամադրած փոխառություններ	-	-	-	-	92,430	-	92,430	92,430
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	363,587	583,535	833,065	1,780,187	224,925	-	224,925	2,005,112
Վերապահովագրության գծով ակտիվներ	-	-	167,523	167,523	20,918	-	20,918	188,441
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	14,997	48,890	63,887	2,311,351	275,799	2,587,150	2,651,037
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	16,091	12,205	28,296	628,874	293,545	922,419	950,715
Ղրամական միջոցներ և դրանց համարժեքներ	149,922	-	-	149,922	-	-	-	149,922
	641,322	714,808	1,148,300	2,504,430	3,278,498	569,344	3,847,842	6,352,272
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Ապահովագրական պարտավորություններ	-	-	347,316	347,316	109,439	-	109,439	456,755
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	42,752	55,220	64,494	162,466	-	-	-	162,466
Վարկեր ռեպո համաձայնագրերով	2,626,291	-	-	2,626,291	-	-	-	2,626,291
Այլ պարտավորություններ	86,102	12,688	14,835	113,625	-	-	-	113,625
	2,755,145	67,908	426,645	3,249,698	109,439	-	109,439	3,359,137
Զուտ Ղիրք	(2,113,823)	646,900	721,655	(745,268)	3,169,059	569,344	3,738,403	2,993,135
Կուտակված ճեղքվածք	(2,113,823)	(1,466,923)	(745,268)		2,423,791	2,993,135		

Հազար ՀՀ դրամ

2010 (վերաներկայացված)

	Սինձև 1 ամիս	1-ից 3 ամիս	3-ից 12 ամիս	Սինձև 12 ամիս, ենթա- հանրա- գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթա- հանրա- գումար	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ								
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	68,456	55,313	111,911	235,680	-	-	-	235,680
Այլ անձանց տրամադրած փոխառություններ	-	-	45,026	45,026	-	-	-	45,026
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	218,125	235,287	828,676	1,282,088	211,381	-	211,381	1,493,469
Վերաապահովագրության գծով ակտիվներ	-	-	174,756	174,756	17,476	-	17,476	192,232
Հետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	2,367	2,367	100,556	-	100,556	102,923
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	38,533	185,566	224,099	499,878	236,098	735,976	960,075
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	519,392	-	-	519,392	-	-	-	519,392
	<u>805,973</u>	<u>329,133</u>	<u>1,348,302</u>	<u>2,483,408</u>	<u>829,291</u>	<u>236,098</u>	<u>1,065,389</u>	<u>3,548,797</u>
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ								
Ապահովագրական պարտավորություններ	-	-	223,431	223,431	71,860	-	71,860	295,291
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	43,054	67,190	38,963	149,207	-	-	-	149,207
Վարկեր ռեպո համաձայնագրերով	103,033	-	-	103,033	-	-	-	103,033
Այլ պարտավորություններ	54,765	49,937	1,497	106,199	-	-	-	106,199
	<u>200,852</u>	<u>117,127</u>	<u>263,891</u>	<u>581,870</u>	<u>71,860</u>	<u>-</u>	<u>71,860</u>	<u>653,730</u>
	<u>605,121</u>	<u>212,006</u>	<u>1,084,411</u>	<u>1,901,538</u>	<u>757,431</u>	<u>236,098</u>	<u>993,529</u>	<u>2,895,067</u>
Զուտ Դիրք								
Կուտակված ճեղքվածք	<u>605,121</u>	<u>817,127</u>	<u>1,901,538</u>	<u>2,658,969</u>	<u>2,658,969</u>	<u>2,895,067</u>		

35 Ապահովագրական և ֆինանսական ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ռիսկերի բազմազանությունը և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում: Ռիսկի կրումը ֆինանսական գործունեության անբաժանելի մասն է, և գործառնական ռիսկերը գործունեության անխուսափելի հետևանքն են: Այդուհանդերձ, Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության ֆինանսական վիճակի վրա անցանկալի ազդեցությունները:

Կարևորագույն ռիսկերն են ապահովագրական և ֆինանսական ռիսկերը: Վերջինս ներառում է պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը:

35.1 Ապահովագրական ռիսկ

Ապահովագրության պայմանագրերի գծով Ընկերության հիմնական ռիսկն այն է, որ փաստացի պահանջները և հատուցումները կամ դրանց հետ կապված ժամկետները տարբերվեն սպասված արդյունքներից: Վերոհիշյալը կապված է պահանջների հաճախականության, դրանց խստության մակարդակի, փաստացի վճարված հատուցումների և երկարաժամկետ պահանջների հետագա զարգացման հետ: Այդ պատճառով, Ընկերության նպատակն է ապահովել բավարար պահուստներ այդ պարտավորությունները ծածկելու համար: Վերը նշված ռիսկի մակարդակը զսպվում է՝

բազմազանեցնելով ապահովագրության պայմանագրերի լայն պորտֆելը: Ռիսկերի փոփոխականությունը նվազեցվում է մակ անդերռայթինգի քաղաքականության պատշաճ ընտրության և իրականացման միջոցով, ինչպես նաև վերաապահովագրության պայմանագրերի կիրառմամբ:

Ռիսկերի զսպման քաղաքականության շրջանակներում Ընկերությունը իրականացնում է ինչպես ֆակուլտատիվ, այնպես էլ օբլիգատոր վերաապահովագրություն: Վերաապահովագրությունը իրականացվում է համամասնական սկզբունքով: Համամասնական վերաապահովագրության հիմնական մասը կազմում է քվոտային վերաապահովագրությունը, որն իրականացվում է Ընկերության գործունեության որոշ դասերի գծով ռիսկի ընդհանուր ենթարկվածությունը նվազեցնելու նպատակով:

Վերաապահովագրողներից վերականգնվող գումարները գնահատվում են ըստ չկարգավորված պահանջների պահուստի և համապատասխանում են վերաապահովագրության պայմանագրերին: Չնայած նրան, որ Ընկերությունն ունի վերաապահովագրության պայմանագրեր, այն չի ազատվում ապահովադիրների նկատմամբ ուղղակի պարտավորություններից և հետևաբար փոխանցված ապահովագրության հետ կապված գոյություն ունի նաև պարտքային ռիսկ, կապված վերաապահովագրողի կողմից վերաապահովագրության պայմանագրերով ստանձնած պարտականությունների չկատարման հետ: Ընկերության կողմից վերաապահովագրության ձեռքբերումը այնպես է բազմազանեցված, որպեսզի Ընկերությունը կախված չլինի մեկ վերաապահովագրողից, իսկ Ընկերության գործառնությունները կախված չլինին մեկ վերաապահովագրության մեկ պայմանագրից:

35.1.1 Ապահովագրության պայմանագրեր

Ընկերությունը հիմնականում կնքում է հետևյալ դասերի ընդհանուր ապահովագրության պայմանագրեր՝ ավտոտրանսպորտային միջոցների (ներառյալ ուղևորներին պատճառված վնասների և երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվության), առողջության, գույքի, ընդհանուր պատասխանատվության, բեռների, դժբախտ պատահարների ապահովագրության, ինչպես նաև ԱՊՊԱ: Ընդհանուր ապահովագրության պայմանագրերը հիմնականում ընդգրկում են 12 ամսյա ժամկետ:

Բացի արդեն նշված ռիսկերի զսպման վերոնշյալ քաղաքականությունից, ռիսկին ենթարկվածությունը նվազեցնելու համար Ընկերությունը կիրառում է նաև պահանջների մանրամասն ուսումնասիրման քաղաքականություն, գնահատելու համար բոլոր նոր և գործող պահանջները, պարբերաբար դիտարկում է պահանջների կարգավորման ընթացակարգերը և հաճախ ուսումնասիրություններ է իրականացնում բացահայտելու համար հնարավոր կեղծ հայտերը: Բացի այդ, Ընկերությունը կիրառում է պահանջների ակտիվ կառավարման և արագ կարգավորման քաղաքականություն, նվազեցնելու համար ապագա անկանխատեսելի զարգացումների հնարավոր բացասական ազդեցությունը Ընկերության վրա: Գնաճի ռիսկը զսպվում է ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորությունները գնահատելիս գնաճը հաշվի առնելով:

Անդերռայթինգի և վերաապահովագրության ռազմավարությունների օգտագործման նպատակն է նվազեցնել Ընկերության ենթարկվածությունը ռիսկից՝ հիմնվելով Ընկերության ղեկավարության կողմից որոշված ռիսկի ընդունելի չափերի վրա: Մրա հիմնական նպատակն է հանդիսանում մեկ դեպքի ազդեցությունը սահմանափակել բաժնետիրական կապիտալի 10%-ի չափով՝ հաշվի առնելով վերաապահովագրությունը: Խորհուրդը կարող է ավելացնել կամ նվազեցնել ընդունելի սահմանաչափերը՝ կախված շուկայական պայմաններից և այլ գործոններից:

Ստորև ներակայացված է ապահովագրական պարտավորությունների կենտրոնացվածությունը՝ ըստ ապահովագրության դասերի.

Հազար ՀՀ դրամ	2011			2010 (վերաներկայացված)		
	Ապահովագրական պարտավորություններ	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ	Ապահովագրական պարտավորություններ	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ
Դժբախտ պատահարներից ապահովագրություն	55,387	(5,481)	49,906	38,418	(5,169)	33,249
Առողջության ապահովագրություն	103,538	-	103,538	108,783	-	108,783
Ցամաքային տրանսպորտի ապահովագրություն	277,280	(56,264)	221,016	278,824	(147,563)	131,261
Օդանավերի ապահովագրություն	17,748	(11,375)	6,373	16,332	(9,291)	7,041
Ջրային փոխադրամիջոցների ապահովագրություն	-	-	-	759	(683)	76
Փոխադրվող գույքի (բեռների) ապահովագրություն	49,890	(32,094)	17,796	41,661	(32,721)	8,940
Հրդեհից և բնական աղետներից ապահովագրություն	414,903	(292,498)	122,405	276,502	(187,708)	88,794
Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն	-	-	-	6,110	(462)	5,648
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության կանավոր ապահովագրություն	12,612	(7,964)	4,648	26,166	(16,067)	10,099
Օդանավերի (նաև՝ բեռնափոխադրող) օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	6,797	(3,671)	3,126	21,728	(19,118)	2,610
Ջրային փոխադրամիջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրություն	-	-	-	3,360	(2,110)	1,250
Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն	39,363	(23,245)	16,118	32,570	(18,959)	13,611
Երաշխիքի տրամադրում	467	-	467	3,956	(15)	3,941
Ֆինանսական վնասների ապահովագրություն	34,214	(31,419)	2,795	34,593	(29,707)	4,886
Աջակցության ապահովագրություն	29,968	(3,750)	26,218	26,867	(1,374)	25,493
Ցամաքային ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն	407,696	-	407,696	-	-	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,449,863	(467,761)	982,102	916,629	(470,947)	445,682

Ընկերությունը սահմանում է առավելագույն սահմանաչափեր, որոնք նա պատրաստ է ընդունել ապահովագրության պայմանագրերից բխող ռիսկի կենտրոնացումների գծով: Բացի այդ, Ընկերությունը հետևում է այդ սահմանաչափերին ռիսկերի գնահատման և ընդունման (անդերռայթինգ) ժամանակ:

Առավելագույն կորուստը, վերապահովագրությունից հետո, որ Ընկերությունն ընդունում է յուրաքանչյուր պայմանագրի գծով, ընդհանուր կապիտալի 10%-ն է կազմում, համաձայն ՀՀ կենտրոնական բանկի կանոնակարգերի:

Հիմնական ենթադրություններ

Ընկերության պարտավորությունների գնահատման հիմքում ընկած հիմնական ենթադրությունը այն է, թե արդյո՞ք Ընկերության ապագա պահանջների զարգացումը մնան կլինի անցյալ պահանջների զարգացումների փորձին: Դրանք ներառում են

ենթադրություններ, կապված պահանջների գծով միջին ծախսի, պահանջների կարգավորման ծախսերի, սպասվող վնասաբերության ցուցանիշների և յուրաքանչյուր տարում դժբախտ պատահարների գծով պահանջների քանակի հետ: Օգտագործվում են լրացուցիչ որակական դատողություններ՝ գնահատելու համար, թե որ տեղեկություններ կիրառելի չեն ապագայի համար, օրինակ՝ հատուկնոս դեպքեր, փոփոխություններ շուկայական պայմաններում, ինչպես օրինակ՝ հանրության վերաբերմունքի փոփոխությունը պահանջների ներկայացման հանդեպ, տնտեսական իրավիճակի փոփոխությունը, ինչպես նաև ներքին գործոններ, ինչպիսիք են պորտֆելի կառուցվածքը, պոլիսների պայմանները, պահանջների կարգավորման ընթացակարգերը:

Հետագա դատողությունները օգտագործվում են որոշելու համար, թե որքանով կարող են արտաքին գործոնները, ինչպիսիք են դատական վճիռները, օրենսդրական դաշտը, ազդել գնահատումների վրա:

Ենթադրությունների վստահելիության վրա ազդող այլ կարևոր հանգամանքները ներառում են տոկոսադրույքները, վճարման ժամկետների երկարաձգումները և փոփոխությունները արտարժույթի փոխարժեքներում:

Այնուամենայնիվ, կապված ՀՀ-ում համեմատաբար նոր ապահովագրական շուկայի հետ, դժվար է կանխատեսել որևէ պահանջի հավանական արդյունքը և ներկայացված պահանջների վերջնական արժեքը: Վնասի վերջնական արժեքի վրա ազդող գործոններից շատերի ազդեցությունը դժվար է որոշել: Այդ պատճառով, Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է վիճակագրական տվյալները, շուկայական փոփոխությունները և այլ գործոններ, պահուստների ավելի զուշավոր գնահատման համար:

Զգայունության վերլուծություն

Ապահովագրական պահանջների պահուստները զգայուն են վերոնշյալ հիմնական ենթադրությունների նկատմամբ: Որոշ ենթադրությունների համար հնարավոր չի եղել որոշել քանակական զգայունությունը, ինչպիսիք են օրենսդրական փոփոխությունները կամ գնահատման գործընթացում անորոշությունները:

Ստորև ներկայացված վերլուծությունը իրականացված է հիմնական ենթադրություններում հնարավոր փոփոխությունների համար, այլ ենթադրությունները անփոփոխ լինելու պայմաններում, և ցույց է տալիս ազդեցությունը մինչև հարկումը շահույթի վրա: Ենթադրությունների փոխակապակցվածությունը զգալի ազդեցություն ունի պահանջների գծով պարտավորությունների վերջնական արժեքը որոշելու վրա, բայց ենթադրությունների փոփոխությունների ազդեցությունը ցույց տալու համար, ենթադրությունները փոփոխվում են անհատական հիմքով: Պետք է նշել, որ այս ենթադրությունների փոփոխությունները գծային չեն:

Հազար ՀՀ դրամ

2011

	Փոփոխություն ենթադրություններում, %	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	
		Համախառն վերաապահովագրությունից	Զուտ վերաապահովագրությունից
Պահանջի միջին արժեք	+10	(171,990)	(152,566)
	-10	171,990	152,566
Սպասվող վնասաբերության ցուցանիշ	+10	(187,849)	(168,804)
	-10	187,849	168,804

Հազար ՀՀ դրամ

	Փոփոխություն ենթադրություն ներում, %	2010 (վերաներկայացված)	
		Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը Համախառն վերաապահովագրու- թյունից	Զուտ վերաապահովագրու- թյունից
Պահանջի միջին արժեք	+10	(49,275)	(27,974)
	-10	49,275	27,974
Սպասվող վնասաբերության ցուցանիշ	+10	(56,160)	(29,451)
	-10	56,160	29,451

Պահանջների զարգացման աղյուսակ

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս գնահատված կուտակային պահանջները, ներառյալ ներկայացված պահանջները և տեղի ունեցած, բայց չներկայացված պահանջները դեպքի յուրաքանչյուր հաջորդ տարվա համար, հաշվետու ամսաթվի դրությամբ, ինչպես նաև կուտակային վճարումները:

Համախառն ապահովագրական պարտավորությունները 2011թ. համար զարգացել են հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	2008	2009	2010	2011	Ընդամենը
<i>Կուտակային պահանջների ընթացիկ գնահատական</i>					
Դեպքի յուրաքանչյուր տարվա վերջում	169,002	323,356	628,716	1,942,167	3,063,241
Մեկ տարի անց	123,463	314,838	569,747		1,008,048
Երկու տարի անց	123,463	309,542			433,005
Երեք տարի անց	123,463				123,463
Կուտակային պահանջների ընթացիկ գնահատական	123,463	309,542	569,747	1,942,167	2,944,919
<i>Կուտակային վճարներ հաշվետու ամսաթվի դրությամբ</i>					
Դեպքի յուրաքանչյուր տարվա վերջում	(118,306)	(161,195)	(425,686)	(1,566,395)	(2,271,582)
Մեկ տարի անց	(123,463)	(234,826)	(498,117)		(856,406)
Երկու տարի անց	(123,463)	(300,189)			(423,652)
Երեք տարի անց	(123,463)				(123,463)
Կուտակային վճարներ հաշվետու ամսաթվի դրությամբ	(123,463)	(300,189)	(498,117)	(1,566,395)	(2,488,164)
Ընդամենը համախառն ապահովագրական պարտավորություններ ըստ հաշվեկշռի	-	9,353	71,630	375,772	456,755

Զուտ ապահովագրական պարտավորությունները 2011թ. համար հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2008	2009	2010	2011	Ընդամենը
<i>Կուտակային պահանջների ընթացիկ գնահատական</i>					
Դեպքի յուրաքանչյուր տարվա վերջում	136,373	253,168	441,938	1,683,086	2,514,565
Մեկ տարի անց	96,986	222,808	381,598		701,392
Երկու տարի անց	96,986	221,398			318,384
Երեք տարի անց	96,986				96,986
Կուտակային պահանջների ընթացիկ գնահատական	96,986	221,398	381,598	1,683,086	2,383,068

Հազար ՀՀ դրամ	2008	2009	2010	2011	Ընդամենը
Կուտակային վճարներ հաշվետու ամսաթվի դրությամբ					
Դեպքի յուրաքանչյուր տարվա վերջում	(95,372)	(216,175)	(295,743)	(1,462,304)	(2,069,594)
Սեկ տարի անց	(96,986)	(213,816)	(342,886)		(653,688)
Երկու տարի անց	(96,986)	(212,578)			(309,564)
Երեք տարի անց	(96,986)				(96,986)
Կուտակային վճարներ հաշվետու ամսաթվի դրությամբ	(96,986)	(212,578)	(342,886)	(1,462,304)	(2,114,754)
Ընդամենը զուտ ապահովագրական պարտավորություններ ըստ հաշվեկշռի	-	8,820	38,712	220,782	268,314

35.2 Պարտքային ռիսկ

Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի: Հիմնական ոլորտները, որտեղ Ընկերության գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, հետևյալն են՝

- Պարտքային արժեթղթեր և բանկային հաշիվներ,
- Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ,
- Ապահովագրության գծով պարտավորություններում վերաապահովագրողի մաս,
- Վերաապահովագրողների նկատմամբ պահանջներ արդեն վճարված պահանջների գծով,
- Ապահովադիրների նկատմամբ պահանջներ,
 Ապահովագրության միջնորդների նկատմամբ պահանջներ:

Պարտքային ռիսկի հետագա բացահայտումներում չվաստակած ապահովագրավճարների պահուստում վերաապահովագրողի բաժինը ընդգրկված չէ վերաապահովագրական ակտիվների կազմում, քանի որ այն ֆինանսական ակտիվ չէ:

35.2.1 Պարտքային ռիսկի առավելագույն չափը

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս պարտքային ռիսկի առավելագույն չափը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ ներառվող բաղադրիչների և հետագա պարտավորությունների տարրերի համար: Ռիսկի առավելագույն չափը ներկայացված է համախառն, զսպողական քաղաքականության կիրառումից առաջ: Վերաապահովագրական ակտիվները չկարգավորված պահանջներում, ՏՉՊՊ-ում վերաապահովագրողի մասն են և վերաապահովագրության գծով ստացվելիք գումարները:

Հազար ՀՀ դրամ

	Ծանոթ.	Համախառն առավելագույն ռիսկ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Համախառն առավելագույն ռիսկ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաանդրկայացված)
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	10	314,615	235,680
Այլ անձանց տրամադրած փոխառություններ	11	92,430	45,026
Վերաապահովագրական ակտիվներ	16	188,441	192,232
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	12	2,005,112	1,493,469
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	18	2,651,037	102,923
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	13	950,715	960,075
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	97,828	373,016
Ընդամենը պարտքային ռիսկի առավելագույն չափ		6,300,178	3,402,421

Երբ ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով, վերը նշված գումարները ներկայացնում են ընթացիկ պարտքային ռիսկի չափը, բայց ոչ առավելագույն ռիսկի չափը, որը կարող է առաջանալ հետագայում՝ որպես արժեքներում փոփոխության հետևանք:

35.2.2 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Վարկանիշներ

Ստորև ներկայացված աղյուսակը տրամադրում է տեղեկատվություն Ընկերության պարտքային ռիսկի չափի վերաբերյալ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ դասակարգելով ակտիվները համաձայն գործընկեր կողմի վարկանիշների՝ ըստ միջազգային վարկանշային գործակալությունների:

Հազար ՀՀ դրամ	A	AA-	BBB+	BBB-	Չվարկանշված	Ընդամենը
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	30,891	168	17,249	-	266,307	314,615
Այլ անձանց տրամադրած փոխառություններ	-	-	-	-	92,430	92,430
Վերաապահովագրական ակտիվներ	91,422	226	96,793	-	-	188,441
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	-	-	-	2,005,112	2,005,112
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	-	2,651,037	2,651,037
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	-	-	-	-	950,715	950,715
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	-	-	-	97,828	97,828
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	122,313	394	114,042	-	6,063,429	6,300,178
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	95,864	705	56,697	53,974	3,195,181	3,402,421

35.2.3 Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Ընկերությունն ունի պարտքային ռիսկի քաղաքականություն, որը գնահատում և սահմանում է, թե որն է համարվում Ընկերության համար պարտքային ռիսկ: Քաղաքականությունը կանոնավոր կերպով վերանայվում է ռիսկային միջավայրի փոփոխությունների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Վերաապահովագրությունն օգտագործվում է ապահովագրության ռիսկը կառավարելու նպատակով: Այնուամենայնիվ, սա չի ազատում Ընկերությանը իր հիմնական ապահովագրային պարտավորությունից: Եթե վերաապահովագրողը որևէ պատճառով չի կատարում պահանջի վճարում, ապա Ընկերությունը պարտավորվում է վճարել ապահովադիրին: Վերաապահովագրությունը կատարվում է այն գործընկեր կողմերի հետ, որոնք ունեն դրական վարկային գնահատական, իսկ ռիսկի սահմանաչափից հնարավոր է խուսափել, հետևելով գործընկեր կողմերի սահմանափակումներին վերաբերող քաղաքականության ուղեցույցին, որը սահմանվում է ամեն տարի Խորհրդի կողմից և ենթակա է կանոնավոր վերանայման: Վերաապահովագրողների վարկունակությունը հաշվի է առնվում տարեկան կտրվածքով վերանայելով ֆինանսական կայունությունը՝ պայմանագիրը վերջնական տեսքի բերելուց առաջ:

35.2.4 Արժեզրկում և պահուստավորման քաղաքականություն

Ֆինանսական ակտիվների արժեզրկման գնահատման հիմնական հատկանիշներն են մայր գումարի կամ տոկոսների վճարումների 90 օրից ավել ուշացումները, գործընկեր կողմերի հետ դրամական հոսքերի հետ կապված դժվարությունները, վարկային ռեյտինգների նվազումները, պայմանագրերի նախնական պայմանների խախտումները: Ընկերությունը արժեզրկման գնահատումը կատարում է անհատապես և խմբային եղանակով:

Ժամկետանց, բայց չարժեզրկված ակտիվներ

Ժամկետանց են համարվում այն ֆինանսական ակտիվները, որոնց գծով առկա են մի քանի օրյա չվճարումներ:

31.12.11թ. դրությամբ Ընկերությունը չունի ժամկետանց, բայց չարժեզրկված ֆինանսական ակտիվներ (2010թ.՝ ոչինչ):

Արժեզրկված ֆինանսական ակտիվներ

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկված ֆինանսական ակտիվները կազմում են 63,207 հազար ՀՀ դրամ (2010թ.՝ 142,797 հազար դրամ):

Ժամկետանց կամ արժեզրկված ակտիվների համար գրավային ապահովածություն չի նախատեսվում:

35.3 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույթի ռիսկը և արտարժույթի ռիսկը:

Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Ընկերությունը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:

35.3.1 Տոկոսադրույթի ռիսկ

Տոկոսադրույթի ռիսկը ծագում է այն հավանականությունից, որ տոկոսադրույթների փոփոխություններն ուղղակիորեն կազդեն Ընկերության ֆինանսական գործիքների հետ կապված դրամական միջոցների հոսքի և նրանց իրական արժեքի վրա:

Տատանվող դրույքների գործիքներն առաջացնում են դրամական հոսքերի տոկոսադրույթի ռիսկ, մինչդեռ հաստատուն տոկոսադրույքը Ընկերության մոտ առաջացնում է իրական արժեքի տոկոսադրույթի ռիսկ:

31.12.11թ. դրությամբ Ընկերությունը չի ունեցել տատանվող տոկոսադրույքներով ֆինանսական գործիքներ:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Ընկերության կապիտալի զգայունությունը տոկոսադրույթների հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով:

Կապիտալի զգայունությունը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույթների ենթադրվող փոփոխությունները: Կապիտալի

ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում նկատվում են զուգահեռ փոփոխություններ, մինչդեռ ժամկետայնության վերլուծությունը ցույց է տալիս զգայունություն ոչ զուգահեռ փոփոխությունների նկատմամբ:

Արտարժույթ	2011					
	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Կապիտալի զգայունություն				
		Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	+1	-	-	(68,581)	(30,691)	(99,272)
ՀՀ դրամ	-1	-	-	71,148	33,797	104,945

Արտարժույթ	2010 (վերաներկայացված)					
	Փոփոխություններ հիմնական տոկոսադրույքներում	Կապիտալի զգայունություն				
		Մինչև 6 ամիս	6 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	Ընդամենը
ՀՀ դրամ	+1	(182)		(12,550)	(12,494)	(25,226)
ՀՀ դրամ	-1	183		12,977	13,724	26,884

35.3.2 Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Խորհուրդը սահմանել է սահմանաչափեր արտարժութային ռիսկերի համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժութները, որոնք կարող են ազդել 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժութի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժութի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և այլ համապարփակ եկամտի վրա: Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում/ում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	2011			2010 (վերաներկայացված)		
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա
ԱՄՆ դոլար	5	67,611	-	5	64,934	2,016
ԱՄՆ դոլար	-5	(67,611)	-	-5	(64,934)	(2,016)

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	312,879	1,736	-
Այլ անձանց տրամադրած փոխառություններ	92,430	-	-
Վերաապահովագրական ակտիվներ	188,441	-	-
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	635,566	1,369,546	-
Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	2,651,037	-	-
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	950,715	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	149,672	250	-
ԸՆԴԱՄԵՆՆԸ ակտիվներ	4,980,740	1,371,532	-
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ապահովագրական պարտավորություններ	456,755	-	-
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	148,507	13,959	-
Վարկեր ռեպո համաձայնագրերով	2,626,291	-	-
Այլ պարտավորություններ	108,280	5,345	-
ԸՆԴԱՄԵՆՆԸ պարտավորություններ	3,339,833	19,304	-
Զուտ դիրք 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,640,907	1,352,228	-
Պայմանական պարտավորություններ (Ապահովագրական գումարներ) 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	565,057,154	230,320,578	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	2,199,641	1,349,156	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	643,565	10,165	-
Զուտ դիրք 2010 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	1,556,076	1,338,991	-
Պայմանական պարտավորություններ (Ապահովագրական գումարներ) 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայացված)	445,783,466	294,322,667	-

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը: Չվաստակաժ ապահովագրավճարների պահուստում

վերաապահովագրողի բաժինը ընդգրկված չէ վերաապահովագրական ակտիվների կազմում, քանի որ այն ֆինանսական ակտիվ չէ:

35.4 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է նորմալ և սթրեսային իրավիճակներում Ընկերության ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողության հետ: Այս ռիսկի զսպման նպատակով Ընկերությունը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդալիս բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերությունը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Իրացվելիության ռիսկը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Ընկերության հետ մասնավորապես:

Ընկերության իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Ընկերությունը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Ընկերությունը օգտվել է ՖՀՄՍ 4 «Ապահովագրության պայմանագրեր»-ի 39 հոդվածի դ կետի i. մասից՝ ՖՀՄՍ 7-ի 39-րդ պարագրաֆի «ա» կետով պահանջվող մարման վերլուծության փոխարեն բացահայտելով տեղեկատվություն ճանաչված ապահովագրական պարտավորություններից առաջացող զուտ դրամական արտահոսքերի գնահատված ժամկետների վերաբերյալ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Տես ծանոթագրություն 34-ը այս պարտավորությունների մարման սպասվելիք ժամկետների համար:

Հազար ՀՀ դրամ	Հաշվեկշռային արժեք	Գնահատված չզեղչված զուտ դրամական հոսքեր		
		Մինչև 1 տարի	1 տարուց ավելի	Ընդամենը
31 դեկտեմբեր, 2011				
Ապահովագրական պարտավորություններ	456,755	347,316	109,439	456,755
Ընդամենը	456,755	347,316	109,439	456,755
31 դեկտեմբեր, 2010 (վերաներկայացված)				
Ապահովագրական պարտավորություններ	295,291	223,431	71,860	295,291
Ընդամենը	295,291	223,431	71,860	295,291

36 Կապիտալի համարժեքություն

Ընկերությունը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Ընկերության կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Ընկերության կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Ընկերությունը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Ընկերությունը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Ընդհանուր կապիտալը հաշվարկվում է ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է երկրորդային կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման պահուստները:

Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

Հազար ՀՀ դրամ	2011 (աուդիտ չարված)	2010 (աուդիտ չարված)
Ընդամենը՝ ընդհանուր կապիտալ	2,007,571	1,360,155
Ապահովագրության մեկ ռիսկի գծով ստանձնած պարտավորության գուտ մեծություն	165,335	133,739
Ապահովագրական ռիսկի առավելագույն չափ (Ն3 նորմատիվ)	8.24%	9.83%

2011թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվում է ընդհանուր կապիտալի նվազագույն չափ 1,500,000 հազար ՀՀ դրամ գումարով:

37 Հետհաշվեկշռային իրադարձություններ

Ֆինանսական տարվա ավարտից հետո Ընկերությունը մտադրություն է հայտնել ձեռք բերելու «Կասկադ Ինշուրանս» ԱՓԲԸ ապահովագրական պորտֆելը: Պորտֆելի գնման գործընթացը գտնվում է բանակցությունների փուլում: